

Եւ պէտք է շատ յոռետես կամ մարդաբէ լինել, որպէս զի առաջուց կարողանանք նախատեսել, որ երկրի ասպագայ ներքին կացութիւնը նոյնը պիտի լինի, գուցէ և աւելի մոայլ, քան առաջ, դաշնակցականների օրօք, մասնաւոր եթէ կոմունիզմի եռանդուն հետևողները, առանց հաշուի առնելու Հայաստանի յատուկ պայմանները, սկսեն կուրորէն իրենց կոմունիստական փորձերը «Ծաղիկ-վարի» հերոս Փանջուռու նման:

Ենք լաւ ծանօթ ենք այն անտե-սական քայքայման, որի այդ փորձերի կիրառումը Ռուսաստանում հաս-ցրեց ժողովուրդը, և կարելի է միայն սարսափով մտածել այն ա-ւելի մասին, որ տեղի կունե-նայ՝ առանց այն էլ հիշատակ քայքայուած՝ Հայաստանում: Յարու-ցանել դասակարգային կուռ աղքատ-ների անունից բուրժուազիայի դէմ մի երկրում, որի զօրախումբները կայանում է ոչ թէ սոցիալական-անարդար փոխ-յարաբերութիւնների մէջ, այլ արտաքին թշնամու աւեր-մունքի մէջ, որին հաւասար զոհ է գնացել ամբողջ ազգաբնակչութիւնը, և մի և նոյն ժամանակ շարունակել ու-նեկալ սրտազին դաշնակցութիւն այն թշնամու, հետ որ դեռ չի վազարել աւե-րել ու կոտորել այդ նոյն երկրը, — աշխարհի գործունէութիւն հազիւ թէ թոյլատրելի համարուի Հայաստանում մի որ և է ողջմիտ կառավարութեան կողմից:

Գիտակցելով այդ, նոյն իսկ Լենի-նը, ինչպէս մեզ հայորդում են, իր ժամանակին, երբ Լեզրանը մեքենա-յութիւններ էր լարում Հայաստանը սովետացնելու նպատակով, ուղարկել էր հնազգի, որով նախադրուցնում էր նրան և նրա ընկերներին աչքի ա-ռաջ ունենալ Հայ ժողովրդի կիսանքի յատուկ պայմանները՝ և ըստ այնմ գործել:

Ընդունակ կը գտնուին արդեօք Հայաստանի նոր կառավարչները գոնեա այնչափ հասկանալ Հայաստա-նի և հայ ժողովրդի գոյութեան յա-տուկ պայմանները, որ չափով հաս-կացել է այդ ուսն կոմունիստների զուրկ Լենինը:

Ծօտակայ ապագան այդ պիտի ցոյց տայ:

Սարգիս Ալվազեան

ՅՈՒՆԵՐ ՍՕՏ ԱՆՅԵԱԼԻՏ

V

Այսպէս ուրեմն շնորհիւ դաշնակից-ների փայլուն յաղթանակների՝ Գեր-մանիայի և Թիւրքիայի չարաշար պարտութեան ծնունդ առաւ դաշնա-կիցների պահանջների հիման վրայ Ռուսահայաստանից անկախ Հայաս-տան: Թոււմ էր թէ Դաշնակցութիւնը գերջի վերջոյ հասաւ իր նպատակին՝ երեսնամեայ գործունէութիւնից յետոյ իրականացաւ ամեն մի հայու երա-զանքը՝ աւանել ազատ և անկախ հայու երկիրը իր ժողովրդով:

Դաշնակցութեանը հայ ժողովուրդը յանձնեց իր ազատութեան բանալին և նա գլուխ անցաւ կռել կոփելու հայ ազգի պետականութեան շէնքը դեռ Ռուսահայաստանի սահմաններում, իսկ մօտիկ հեռանկարն էլ կցելու էր Թիւր-քահայաստանը:

Ելալիսով Դաշնակցութիւնը յեղա-փոխական, մարտական գործունէու-թիւնից անցաւ պետական շինարա-րական գործունէութեանը 1918 թ. մայիս ամսից: Սակայն ինչ արաւ այդ կուսակցութիւնը, բերեց հասցրեց ներ-

կայ վիճակին: Անշուշտ շատ բան քն-նադատելիս կարելի է ցոյց տալ ար-դարացուցիչ և մեղմացուցիչ հանգա-մանքներ, սակայն մի դէպքում ի նը-կատի չեն առնում այդ պայմաններն և անխնայ դատապարտում, անարգան-քի օրինին են դաժնում ամենքը, ով էլ լինի: Այդ այն է, երբ մէկն և կամ մի կազմակերպութիւն գլուխ է կանգ-նում մեն-մենակ տնօրինելու մի ժո-ղովրդի բախտը: Ահա թէ ինչու հայ ժողովրդի պետականութեան ամօթա-լի տապալման մէջ զլիւղին յան-ցաւոր է Դաշնակցութիւնը: Հայ-ստանի պետականութեան գոյու-թեան օրից հէնց որ Դաշնակցութիւնը կպաւ պետական գործին, անմիջապէս ցոյց տուեց մեր պետականութեան մարմնի վրայ Դաշնակցութեան սպե-ցեֆիկ յատկանիշներից մէկը՝ մաուզե-րականութիւնը...

Հ ե ո ա գ ի ր ճ ե ր

(ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՌ ԳՈՐԾ)

10 յունի.

Բօլշեւիկները Ղրիմում

Կ. ՊՕԼԻՍ. — «Ժողովուրդի զօրութեամբ» դեկտ. 18-ին գրում է.

«Մէկատապալից Կ. Պօլիս եկաւ խաղական մի շոգհնաւ, որ ապրանք էր տարել Ղրիմ բօլշեւիկներին համար: Շոգհնաւի նաւաստիները Սեփապո-պօլին մօտենալիս տեսել են հետեւեալը. բուլվարի երկարութեամբ շինուած էին կախաղաններ կախուած մարդանցով: Գիշերով շոգհնաւը փախած երկու սուսաններից նաւաստիները իմացան թէ բօլշեւիկները սկզբում հետապնդում էին միայն կողոպուիչներին, բայց յետոյ սկսեցին հալածել Սեփապո-պօլում ձեռացած պաշտօնեաներին և օֆիցէրներին: Այնուհետեւ բօլշեւիկնե-րը սկսեցին ցուցակազբել և ձերբա-կալել անգլիական ղեկաւորներ հագած — բնակիչներին, նաեւ այն բոլոր ան-ձանց, որոնք ունէին Դէնիկինից և Վրանգէլից վկայականներ: Ազգաբնա-կութեանը անաբեկելու համար գնդա-կահարուսները փոխարինուեցին հրա-պարակային կախաղաններով: Այդ նպատակով բօլշեւիկները օգտուեցին բուլվարում եղած բոլոր ծառերից ու հեռախօսի սիւներից: Օֆիցէրներին կախում էին զինուորական համա-զգեստներով, իսկ քաղաքացիներին՝ կիսամերկ: Կախուածների թուում էին և կանայք: Պնդում են թէ ընդամենը կախել են մօտ 3000 հոգի:

Բօլշեւիկների տերապետութիւնից մի քանի օր յետոյ, բանուորների մէջ սկսուեց թշնամական վերաբերմունք դէպի բօլշեւիկները: Բոլոր միտինգ-ներում անցնում է մէնշեւիկների բա-նաձեւերը: Պետրոպօլովսկի գործարա-նում խուզարկութեան ժամանակ գտ-նուեցին 12 զնդակացի, որից յետոյ բօլշեւիկները սկսեցին ընկալել անհե-նաե բանուորների վերաբերմամբ:

Քաղաքի շուկաները համարեա դա-տարկ են: Հաջի Փոնտը արժէ 2,500 ռ.: Գիւղերի հետ հաղորդակցութիւնը բնաւ չըկայ: Հացի քարտերով ազգա-բնակչութեանը տրուած է քարտի ֆ. հաց:

Դօլերայի համաձայնակ

Կ. ՊՕԼԻՍ, «Օրէնտ Նիւզ» հա-ղորդում է, թէ Ռուսաստանում, Լե-հաստանում և Կ. Պօլսում երեւցել է խօլերա:

Մաուզերականութեամբ բառի լայն իմաստով վարակուած էին Հայաստանի պետական բոլոր դաշնակ. գործիչները՝ սկսած վերջին ծառայ պաշտօնեայից մինչև ամենաբարձրեալը: Ապա Դաշ-նակցութիւնը ամենայն եռանդով ու թափով ձեռնարկեց մի այլ բանի՝ այն է դարձնել Հայաստանը մի տե-սակ Դաշնակստան, միմիայն կուսակ-ցական զիմալը բանում էր բոլոր դեմքերը պետական գործունէութեան, ով այդ դեմալը չուէր, նրա համար բոլոր մուտքերը փակ էին: Յանդ-գնութիւնը հասաւ մինչև այն ա-տիճանի, որ վերջին տարին կուսակ-ցութեան արեւելեան բնութիւն դարձաւ Հայաստանի կառավարութիւնը և Հայ-աստանն ու Դաշնակցութիւնը միա-ձուլեցին, այսինքն Հայաստանը պէտք էր հասկանալ... Դաշնակստան: Կալիսաւ

Անգլիան և Ռուսաստանը

ԼՈՆԴՈՆ, Անգլիական մամուլը յայտ-նում է.

«Անգլիական կառավարութեան վեր-ջին նիստը ըստ երևոյթին վերջ է դնում Ռուսաստանի հետ առեւտրա-կան յարաբերութիւնները վերսկսելու մասին կառավարող բանակցութիւն-ներին: Կառավարութեան խորհըր-դակցութիւնը տեղի մի քանի ժամ: Կարիքէտը բաժանում է երկու կու-սակցութեան, մի կողմում են Լոյդ-Ջօրջը, Բօնար Լօուն և Բօրէքտ Պօր-նը, որոնք կողմնակից են առեւտրական համաձայնութեան միւս կողմում — Էն-զօնը, Չէրչիլը, Լօնգը և Բիւրկէնիս-զը: Այս խմբակը պահանջում է Ռու-սաստանից՝ չը միջամտել Վրաստանի, Հայաստանի և Ադրբէյջանի գործերին:

Փրանսիական մամուլի իմֆոր-մացիան

ԼՊՈՆ, 6 յունի. — Փրանսիական մա-մուլը յայտնում է, թէ հիւսիս- արե-ւելեան Կովկասի լեռներում դարգա-նում է լուրջ ապստամբական շար-ժում Իմամ Շամիլի ղեկավարութեամբ: Այդ շարժումը ճնշելու համար բոլշե-վիկներն արդէն կորցրել են 4000 մարդ, 100 զնդակացի և 6 թնթա-նօթ:

Փրանսիայի քաղաքականութիւնը Ռուսաստանի վերաբերմամբ

ԼՊՈՆ. — Արտաքին գործերի մի-նիստը հարկադրուած էր վերջնա-կանապէս որոշել Փրանսիայի քաղա-քականութիւնը սովետական Ռուսաս-տանի վերաբերմամբ:

Ի պատասխանի պատգամաւոր Կա-լէնի հարցապնդման, արտաքին գոր-ծերի մինիստրը առաջ.

«1) Թէ Փրանսիայի՝ ուսակաւ գոր-ծերի վրայ կատարած ծախքերը կադ-մում են ոչ թէ մի քանի միլիարդ, ինչպէս այդ պնդում են, այլ մի քանի հարիւր միլիոն ֆրանկ.

2) Թէ Ռուսաստանի դէմ պաշա-րում չկայ.

3) Թէ մասնաւոր անձինք ազատ են առեւտրական յարաբերութիւններ հաստատել Ռուսաստանի հետ սեփա-կան ընկով, բայց առանց կառավա-րութեան պատասխանատւութեան:

4) Թէ Փրանսիական կառավարու-թիւնը մտադիր չէ ձանաչել սովետա-կան իշխանութիւնը մինչև այն ժա-մանակ, երբ Ռուսաստանը երաշխե-

ներ կը տայ, թէ կը կատարէ ուսա-կան նախկին կառավարութիւնների պարտաւորութիւնները օտարերկրեայ կառավարութիւնների և մասնաւոր անձանց վերաբերմամբ.

5) Թէ Վրանգէլի կազմած կառա-վարութիւնը Ռուսաստանի մի մա-սում դադարել է գոյութիւն ունենալ իր գրաւուած հողաբաժնից հեռանա-լու հետեւանքով.

6) Թէ Ֆրանսիական կառավարու-թիւնը, դէմ լինելով ամեն տեսակ ագրեսիւ քաղաքականութեան և հաշ-ուի առնելով դաշնակից զլխաւոր կա-ռավարութիւնների 1920 թ. փետրվ. 24 ի կօնֆերէնցիայի դէկլարացիան, բաւականացաւ Մօսկովեան կառավա-րութեան յարձակմանը ենթարկուած ժողովուրդներին օգնելով: Կառավա-րութիւնը այսուհետեւ ևս կաշակցէ այն պետութիւններին, որոնք հար-կադրուած կը լինին պաշտպանել իրանց հողաբաժինը և ազատութիւնը բօլշեւիկներից:

Պիլսոնգսկու առողջութիւնը

ԼՊՈՆ, Մարշալ Պիլսոնգսկու տկա-րութիւնը ստիպում է յետաձգել իր ձանապարհորդութիւնը Պարիզ մինչև յունիսի վերջը:

Երեւանների մահացութիւնը Գեր-մանիայում

ՆԱՌՈՒՆ, Բժշկական վերջին վիճա-կագրութեամբ, երեւանների մահա-ցութիւնը Բերլինում աւելացել է երեք անգամ:

Լոյդ-Ջօրջի մեկնումը

ՊԱՐԻՉ, 9 յունի. — Լոյդ Ջօրջը մեկ-նում է Լօնգոնից յունի. 17-ին և գի-մում է Պարիզ, որպէսզի ներկայ լինի դաշնակից ժողովուրդների նիստին, որ տեւելու է 4 օր:

Նալտա քաղաքը

ՄՕՍԿՈՒՍ. — Նալտա քաղաքը այ-սուհետեւ կոչուելու է «Կարմիր զօրքի քաղաք»:

Բումինիան և Ռուսաստանը

ՄՕՍԿՈՒՍ. — Պարիզի բուլետենա-կան պաշտօնը յայտնել է Փրանսիական պարլամենտի անդամներին, թէ Բու-մինիան չի պարտաւորում պատե-րազմել Սովետական Ռուսաստանի դէմ:

Թիւրք պարտիզաններ

ՄՕՍԿՈՒՍ. — Բաթումի և Տրապիզո-նի միջև ուժեղացել է Թիւրք դասա-լիք զինուորների գործունէութիւնը:

Կ. Պօլսի լրագրիւնները հաղորդում են, թէ ուժեղացել են ապստամբ դօ-րախմբերի գործողութիւնները յունա-կան Զախուայի դօրաճակատի թի-կունքում:

Զինովեւի անցագիրը մերժուած

Լրագրիւնը հաղորդում են, թէ խաղական կառավարութիւնը մերժեց վաւերացնելու Զինովեւի, Բուլտա-բիւրի և Բալբանովի անցագրերը, որոնք մտադիր էին Լիվօրնօ դալ սոցիալական կուսակցութիւնների կոնգրեսին մասնակցելու համար:

(ՌՈՒՍ. ՄԱՍԿՈՒՍ ԲԻՐՈ)

յունի. 10

Զիչէրին ըողոցի առիթով

Մ.Թ.Է.Ն. 20 դեկտեմբ. Զիչէրինի պաշտօնադրի առիթով, որով բաղա-

յայտնուեց Անտանտայի՝ յունական ներքին գործերին միջամտելու գէտ, յիշեցնելով՝ լրագրողը գրում է, թէ անը առաջուց էլ առում էինք, թէ քոլէկիւնները վարում են զարմանալի արտաքին քաղաքականութիւն:

Թեքնը պէտք է խոստովանենք, թէ Սովետական Ռուսաստանը կառավարում է խելօք ու փորձուած մարդկանցով, որոնք կարողանում են օգտուել յարմար ըզնեաներից: Միջազգային քաղաքականութեան առաջնային դրա երևալու ժամանակից նրանք աջողութեամբ աշխատում են իրանց կողմը թեքել բոլոր նրանց, որոնք դժգոհ են Անտանտայից, առանց կրօնի, ազգութեան ու քաղաքական տենդենցների խտրութեան, երևան բերելով դիւանագիտական բանակցութիւնների ժամանակ ձարդիկութիւն ու առաձգականութիւն, զերազանցելով բուրժուական բանակի իրանց եղբայրներին:

Սովետական իրաւակազմը, հակառակ ցարական իրաւակազմին, գէշ շարժումներ է անում քան քրիստոնէութեան իդէալները և ազդարարելով սոցիալական արդարութեան ու կապիտալիստական լծից ազատագրութեան իդէալներ՝ կոմունիզմի գրոշակի տակ Ստալինը քաղաքականութեան առաջնային վրայ նոր իրաւակազմը դժգոհ զանգուածների շուրջ աշակցութիւնը ձեռք բերեց:

«Ռուսաստանը կենէլ յաղթած: Երէկ տակաւին պարտուած, չէզոքացուած, առանց դաշնակիցների ու առանց համակրութեան, նա այսօր կանգնած է համաշխարհային բանուորական շարժման գլուխ, ուժեղ և անարկու թիւրքերին հետ և պարտուածների ստատիկ դաշնակցութեամբ: Իր գոյութեան սկզբից երբեք Ռուսաստանը այսպէս մօտ կանգնած չէ եղել Կ. Պոլսին և ներդաշնակներին, ինչպէս այսօր: Ոչ մի Ռուսաստան այնպէս չէ սպառնացել Մերկուտըրի Արևելքին, ինչպէս Լէնինի Ռուսաստանը»:

Մ ի շ ա գ ւ տ ք ու մ

ԳՅՍԿՈՒՄ, 3 յունվ. (բաղիօ):— Պարբերից հաղորդում են, թէ Բաղդադում սպանուել է անգլիական սովետականութեան պետը: Միջազգային ազդարանակութեան յուշմունքը: Անգլիայի գէտ աճում է: Հնդկական ազգային խորհուրդը համակրանքի բանաձև է ընդունել անգլիական բանաձև մահացած լորդ-միր Կորկի յիշատակին: Ուրիշ բանաձևով բողոքում է, որ հնդկի վաճառականները մասնակցում են անգլիական բօրսայում:

Մահապատիժ իրանդիստանում

ԳՅՍԿՈՒՄ, 7 յունվ. (բաղիօ):— Անգլիական կառավարութիւնը իրանդիստանում գործադրում է մահապատիժ իրանդիստան յեղափոխականների գէտ պաշարելու համար:

Հակա-յեղափոխականները

ԳՅՍԿՈՒՄ, 9 յունվ. (բաղիօ):— Միջազգային հրաժարուել է պետական հրաժարել հոմաբերու մաքից և միացել է Ալեքսանդրի, Կերենսկիի և Միքայի հախճանում խորհրդակցութեանը:

Գուշկովը Բեքլինում

ՆԱՌԻՆ, 7 յունվ. — Բեքլինի փողովում ռուսական նախկին օֆիցեր Զաքարիան ձանաչեց Գուշկովին և, աղաղակելով՝ «դու այստեղ լիս, դա»:

աճան», սկսեց ծեծել նրան: Սկզբում ամբողջ բռնեց Գուշկովի կողմը, ազդուելով նրա հասակից, բայց յետոյ Զաքարիան կարողացաւ համոզել ամբողջին, թէ Գուշկովը Գերմանիայի թշնամին է և 1914 թ. պատերազմի գլխավոր յանցաւորներից մէկը, և շարունակեց ծեծել նրան մինչև ոտքի կանուխելը միջամտեց: Զաքարիան մեղադրում է Գուշկովին ցարին տապալելը և 1917 թուին զօրքը կազմալուծելը:

(ԱՊՐԻԷ. ՏԵՂԵԱՍՏՈՒ ԲԻՐՈ)

Ընկ. Հոսէյնովի ծանապարհորդութիւնը

Այս օրերս, Լենքորանի գաւառից, վերադարձաւ արտ. գործերի ժողովրդ. կոմիտար Մ. Գ. Հոսէյնովը: Նրա կարգադրութեամբ Լենքորանի գաւառի գիւղական և աշխատաւոր ազգաբնակչութեանը ձրիաբար բաժանուել է նաւթ, աղ, մանուֆակտուրա, մոնպասիէ և այլ իրեր:

Մթերքներ պրօֆեսորներին

Մարքէշանի յեղ. կոմիտէն, Բագուի պետական համալսարանի աշխատանքների կարեւորութեան պատճառով, որոշել է առաջարկել ժող. պարենաւորման կոմիտէին պայմանաւորուել պրօֆեսորների հետ նրանց անհրաժեշտ մթերքներ և պարենաւորում տալու համար, համարելով նրանց առանձին դրութեան մէջ:

Սոսիալ-Երգչուհի Եփրատում

Կ. Պոլսի լրագրողները հաղորդում են թէ Մուստաֆա-Քէմալը աշխատում է վերջացնել Սրվաշ-Երգչուհի երկաթագծի շինութիւնը, որպէսզի կապ հաստատի Կովկասի հետ:

Այդ գործի համար համապատասխան հրամաններ են տուած Դարսի զինուորական իշխանութեանը:

Վ երջի ն պ օ ս տ

ՌՈՒՄ-ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ժուրնալ Օֆ.»-ի մէջ տպուած է Ֆրանսիական արտաքին գործերի միւնիստրութեան յայտարարութիւնը, թէ Ֆրանսիայում գոյութիւն չունի այնպիսի օրէնք, որ արգելէ տեւորական ու ֆինանսական յարաբերութիւնները սօվետական Ռուսաստանի հետ. բայց ի նկատի ունենալով քաղաքական կապերի բացակայութիւնը Ֆրանսիայի և սօվետական Ռուսաստանի միջև, Ֆրանսիական կառավարութիւնը պատահականաբար չէ վերցնում իր վրայ ռուս-ֆրանսիական առեւտրական պայմանների հետեւանքների համար Ֆրանսիացի քաղաքացիների վերաբերմամբ: Ֆրանսիայից թոյլատրուած է արտահանել Ռուսաստան ամեն տեսակ մթերքներ, բացի գէնքից ու ռազմամթերքից:

ՀՆԻԿՆԵՐԸ ԵՒ ԱՆԱՏՈՒՄԸ

Տրապիզոն, 20 դեկտ. «Բաղդադ» թերթը հաղորդում է, թէ Հնդկաստանի մուսուլմանութեան իրաւիֆաւի կոմիտէի գլխավորներից մէկը՝ Մուսաֆա Մուհեյր-է-Ֆեհրին Անգորա է հասել ընդունուել հանդիսաւոր կերպով: Մուհեյր-է-Ֆեհրին ողջուն է բերել հեն-

Անքաւականութիւն անգղիացիների դէմ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍ, 30 դեկտ.— Թեքնիկական շինարարի և պարսիկ կողակների միջև աճում է անքաւականութիւն գէտ անգլիացիների: Շահի և անգլիացիների միջև տեղի ունին վիճաբանութիւններ: Որոշուած է վերաքննել Պարսկաստանի և Անգլիայի պայմանագիրը՝ անգլիացիների կողմից գործարաններն և ֆաբրիկաները շահագործելու առթիւ:

Խաղում են Անգորայի հետ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍ, 28 դեկտ.— Կ. Պոլսից տեղա հասաւ մի պատուիրակութիւն կազմուած 2 թուրքերից և մի Ֆրանսիացուց: Յամառ լուրեր են պտտում, թէ Անգլիան առաջարկել է Ֆեմալին Ալքրիանապօլը, Զմիւռնիան և խոստացել բոլորովին վերաքննել Մեզլի դաշնագիրը: Դրա փոխարէն Քէմալը պարտաւորուած է խզել Սովետական Ռուսաստանի հետ ունեցած յարաբերութիւնները և մինչև իսկ պատերազմական գործողութիւններ սկսել:

Իզգէտ-փաշայի միսսիան

Կ. ՊՈԼԻՍ, 6 յունվ.— Իզգէտ-փաշայի միսսիան Անգորայից Կ. Պոլիս հասաւ:

«Երկիր» թերթի փակումը

Կ. ՊՈԼԻՍ, 25 դեկտ. Անտանտի ներկայացուցիչների կարգադրութեամբ «Երկիր» լրագիրը փակուած է և չորս օր շարունակ:

Դաշնակների փախուստը

Կ. Պոլսի թերթերի տեղեկութիւնների համաձայն Հայաստանի դաշնակների նախկին կառավարութեան գործակալների հուսանք է սկսել դէպի Կ. Պոլիս: Այնտեղ է հասել նախկին դերասան և երկանի կոմենդանտ Մ. Շախաթուհին, Արսէն Միքայիլեանը և ուրիշները:

դիկ մուսուլմաններից և յայտնել է, թէ Հնդկաստանը պատրաստ է ամեն տեսակ բարոյական աշակցութիւն ցոյց տալ Անատոլիային, որը կուի է մղում մուսուլմաններին ստրկացնող ժողովուրդների դէմ:

ՌՈՒՄԱԿԱՆ ԶՈՐԲԵՐԸ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ

Կ. Պոլսից «Տանին» հեռագրում են, թէ Տրապիզոն ափ են իջել ռուս սովետական զօրքեր:

ՎՐԱՆԳԵԼԻ ԲԱՆԱԿԸ

Կ. Պոլսում լուրեր են պտտում, թէ Վրանգելի բանակը կօգտագործուի Ֆրանսիացիների կողմից Միքայի և փոքր Ասիայի ուրիշ շրջանների պատերազմի համար:

ՌՈՒՄԱԿԱՆ ՆԱԽԱՏՈՐՄԻՂԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ ՅՐԱՆՍԻԱԿԱՆՆԵՐԻՆ

Պարբեր. «Послѣд. Изв.» թերթի հաղորդակցութեան համաձայն, Վրանգելը ռուսական նաւատորմից վաճառում է Ֆրանսիացիներին:

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵՐՔՈՒՄ ԵՒ ՕԳՆԵԼ ՎՐԱՆԳԵԼԻ ԲԱՆԱԿԻՆ

«Послѣд. Изв.» թերթի տեղեկութեան համաձայն, Ֆրանսիական կառավարութիւնը մեքոնում է այսուհետեւ պահպանել իր միջոցներով Վրանգելի բանակը և Լիթի փախստականներին:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Լէօն Բուրժուան Ֆրանսիական պարլամենտում յայտնել է, թէ Ազգերի Լիգան, որպէս պատասխան սովետական կառավարութեան ծաղրի և հեգնանքի, դիմել է Ազգերի Լիգայի մէջ ընդունուած պետութիւններին, խնդրելով տալ իրան զինուորական ոյժեր՝ կարգը պահպանելու համար:

ՎՐԱՆԳԵԼԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԸ

«Св. Мысль» լրագիրը հաղորդում է, թէ քեմալիստների և հայերի պատերազմի ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը առաջարկում էր Վրանգելի բանակը Կովկաս ուղարկել՝ չեղուելու բոլշևիկների և քեմալիստների դէմ:

Այդ ծրագիրը չիրագործուեց:

ԱՄԵՐԻԿԱ ԲԱՆՈՒՈՐՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ամերիկայի սոցիալիստական կուսակցութիւնը 25 հոգուց բաղկացած մի կոմիտէտ է կազմակերպել՝ բանակցութիւններ վարելու եւրոպական բանուոր կազմակերպութիւնների հետ սովետական Ռուսաստանին օգնութիւն հասցնելու համար:

Հ ա յ ա ս տ ա ճ

(Ռուս. Մ. Բ.)

ԱՆԳՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԱՆԳԵԶՈՒՐ, ՂԱՐԱՐԱՂ ԵՒ ՆԱԽԴՅԵՆԸ

Կ. Պոլիս, 20 դեկտ.— «Երկիր» թերթը հաղորդում է, թէ արտաքին գործերի կոմիտարը մեծ ազդային ժողովում արած զեկուցման մէջ, ի միջի այլոց, ասել է.— «Անատոլիայի նպատակն է պաշտպանել միայն Տաճակաւոր անկախութիւնը: Իսկ ինչ վերաբերում է Լաբաբաղին, Զանգեզուրին և Նախիջևանին, այդ շրջանները պէտք է դատարկուեն, որովհետեւ արդէն դրաւուած են սովետական զօրքերով»:

ՕՅԻՑԵՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Աւելի քան 300 օֆիցեր, Աղստաֆայում յատուկ ցուցակագրութիւն կազմելուց յետոյ, Դիլշանի վրայով բեռնակիր աւտոմոբիլներով ուղարկուեցին Մօսկուա, քաղաքական օֆիցերական դասընթացներ լսելու համար: Բաղուից, նոյն Աղստաֆայի վրայով, հասան 50 խորհրդային ռուս օֆիցերներ՝ հայոց բանակում շտաբի պաշտօններ վարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՂ. ԿՕՄԻՏԵՆ

Հայաստանի յեղափոխական կոմիտէն տեղաւորուած է պարլամենտի շինութեան մէջ:

Ա. ԲԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Հայաստանի հեռադրական գործա կալութեան նախկին տնօրէն Ա. Բալանթարեանը (առաջուայ «Բոլշևիկ» տնօրէն) Հայաստան է հրաւիրուած աշխատելու ռուս. հեռադր. գործակալութեան մէջ:

ՏԱԾԻԿՆԵՐԸ ՄԵՐՔՈՒՄ ԵՒ ՀԵՌԱՆԱԿԱՆ ԱԼԷԲԱՆԻՆԻՆԻՆ

Տաճիկները յամառօքն հրաժարուում են կատարել սովետական Հայաստանի պահանջը՝ հեռանալ Ալեքսանդրապօլից:

ԲՈՒՐՔՈՒՄԱԶԻՍԻ ՕՐԻՆԱԳԻՒՄ ԳՈՒՄՈՒԹԻՒՆ

Երեւան, 2 յունվարի. Հայաստանի

յեղափ. կոմիտեն որոշեց վերացնել սովետական Հայաստանում. ուսումնական կայսրության օրէնքների հաւաքածուն իրենց բոլոր փոփոխութիւններով և լրացումներով, որպիսիները ընդունուած էին ժամանակակերպ կառավարութիւնների՝ Անդրկովկասեան սէյմի, պարլամենտի և Հայաստանի նախկին կառավարութեան կողմից:

Սյունիստե սովետական Հայաստանի սահմաններում գործող օրէնքներ համարուելու են ուս. սոց. ֆ. սովետ. օրէնքները իրենց բոլոր այն լրացումներով և փոփոխութիւններով, որպիսիները կը կատարուեն Հայաստանի յեղափ. կոմիտէի և այլ համապատասխան օրինական իշխանութիւնների ձեռքով:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԲԱՐԵԳՐՈՒԹԵԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

Երեւան, 1 յունվ.—Հայաստանի յեղափ. կոմիտեն առաջարկեց Հայաստանի սոց. ապահ. խորհրդին լիկվիդացիայի ենթարկել Մօսկուայի կոմիտէի որբանոցային բարեգործական հիմնարկութիւնները և կովկասեան բարեգործական ընկերութիւնը: Այս հիմնարկութիւնների բոլոր գործերը և գոյքը յանձնուած են քաղաքային և գաւառական յեղ. կոմիտէներին կից գտնուած սոցիալական ապահովութեան բաժանմունքին:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

Երեւան, 30 դեկտ.—Հայաստանի յեղափ. կոմ. դեկրետ է հրատարակել զինուորական բարձրագոյն դատարանի մասին: Նախագահ է նշանակուած ընկ. Բէկլազեան:

Ամերիկեան որբանոցները

Երեւան, 30 դեկտ.—Ամերիկեան բոլոր որբանոցները ենթարկուած են սոցիալական դատարանական ընդհանուր ձեւերին, որպիսիները որոշել է Հայաստանի խորհուրդը:

(Ազրբ. Տ. Բ.)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՍԻԱՌՈՒՄ

Երեւան, 28 դեկտ.—Սովետական Հայաստանում կազմակերպչական աշխատանքները ընթանում են արագ աճով: Գիւղերում հաստատուած են կոմիտէներ: Գիւղացի աղքատ գասակալը ողջունում է սովետական իշխանութիւնը, պատրաստակամութիւն յայտնելով ամբասցենի պրոլետարական յեղափոխութեան նուաճումները իր ստեղծագործական աշխատանքով: Ամենուրեք բացուած են կոմմունիստական ակումբներ, ընթերցարաններ ու բաղնիքներ: Լրագիրները տարածուած են մեծ քանակութեամբ: Մեծ աշխուրթեամբ կատարւում են պարենաւորման աշխատանքներ: Գիւղացի գիտակցօրէն զբաղւում են քայքայուած տնտեսութիւնը վերականգնելով:

Միտինգներում գանազան գիւղերում գիւղացիք ողջունում են ուսումնական կարմիր զօրամասերի Հայաստան գալը, պատրաստակամութիւն յայտնելով օգնել մթերքներով ու փոխադրական միջոցներով:

ԲԱՆԿԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Երեւան, 30 դեկտ.—Ժողովրդական տնտեսութիւնը կանոնաւոր զարգացնելու և բանկային սպէկուլացիան արմատախիլ անելու նպատակով,

Հայկական յեղ. կոմիտեն որոշեց յայտարարել Սովետական Հայաստանի բանկային գործը պետական մենապաշարութիւն: Ռուսական պետական բոլոր գոյութիւն ունեցող հաստատութիւնները և միւս մասնաւոր բանկերը, փոխադարձ վարկի ընկերութիւնները ձուլուած են Սովետական Հայաստանի պետական բանկի հետ: Մանր դրամատերերի շահերը նկատի կառնուեն:

ԶԷԶՈՒԳ ԳՕՏԻՈՒՄ

Երեւան, 4 յունվ.—Ալեքսանդրօպօլի մօտ, չէզոք գօտիւում գրութիւնը կա յուն է և հանգստութիւնը վերականգնուած է: Մուծ տարրերը զինաթափ են արուած, իսկ անկարգութիւն արածները կարանաւորուած են: Կազմակերպուած է սովետական միլիցիա: Ազգաբնակչութիւնը ցնծութեամբ ընդունեց սովետական իշխանութիւնը և միջոցներ են ձեռք առնում հայթայթելու ազգաբնակչութեանը պարենական ու բժշկական օգնութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԵԿԵՐԸ

Երեւան, 5 յունվ.—Յեղ. կոմիտեն որոշեց Սովետական Հայաստանի հողաբաժնում պարտադիր Ռուս. Սով. Ֆեդ. Սօց. Հանր. դրամների գործադրութիւնը: Ռուսական մի ուղբի թղթադրամը հաւասար է նախկին դաշնակցական կառավարութեան բաց թողած 5 ուղբու չեկի արժէքին: Սովետական հայ կառավարութեան նոր բաց թողնուելիք թղթադրամները ունենալու են ուսումնական թղթադրամների կուրսը:

ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Երեւան, 4 յունվ.—Ժող. կրթ. ժող. կոմիտար Յովհաննիսեան կարող է միջոցներ է ձեռք առել վերակազմելու կանոնաւոր զբաղմունքները Սովետական Հայաստանի կրթական հաստատութիւններում, որոնք ընդհատուել էին դաշնակցական կառավարութեան յայտարարած ուսուցիչների զինակոչի հետեանքով:

ՓՈԽՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԳՈՅՑՐՈՒՄ

Հայաստանի սովետական իշխանութիւնը անգոյացրեց նախկին դաշնակցական կառավարութեան բոլոր ներքին ու արտաքին փոխառութիւնները:

ԱՆԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Սովետական Կովկասի պարենաւորման մարմինը պատուիրել է նշանակել յատուկ պարենաւորման ֆոնդ՝ Սովետական Հայաստանի անհրաժեշտ քանակութեամբ ալիւր մատակարարելու համար:

Ք Ր Ո Ն Ի Կ Ո Ն

Հիմնադիր ժողովի նախագահ Կ. Զիւէիձէն մեկնեց Կիւրիլի, իսկ նրա աւագ օգնական Լօմտատիձէն՝ Փոթի:

Ճանապարհների հաղորդակցութեան միջոցով Ն. Բամբուլիին մեկնեց Բաթում:

Փոթի մեկնեց պետական վերահսկիչ Գօգէիշվիլին:

Լեւոնային (հանքային) վարչութիւնը տեղեկութիւն է ստացել թէ գեղեմբերի 24-ից վերանորոգել է իւր գործունէութիւնը հանքագետութեան ամենախոշոր կվարցիօնի պղնձի

ձուլարանի գործարանը: Այդ գործարանը ամսական պէտք է պատրաստով 7—10,000 փութ պղինձ: Միաժամանակ այդ գործարանը պէտք է պատրաստէ միջնակի փողի, որից միջնակ է պատրաստուում: Մօսկի օրերում վերանորոգելու է իւր գործունէութիւնը Ալլադիբրգու երկրորդ խոշոր պղնձե ձուլարանի գործարանը, որը պատկանում է Կովկասի մետաղագիւղական ընկերութեանը: Գործարանում հանքի պաշար կայ մինչեւ 200,000 փ: Գործարանը զիւսաւորւած է կարտագրի քիմիական գանազան մթերքներ, այսինքն՝ ծծմբաթթու, կալցի-կարբիտ, պղնձե արջապա, ցել-լուլօզի (պոստի) թուղթ և այլն: Դրա հետ զուգընթաց աշխատանքներ տեղի կունենան հանքերը վերականգնելու համար:

Կ. Հ. Բ. Ընկ. Խորհուրդը յատկացրել է տ. Զաբէլի յօրեկանի աւիթով 15000 ու., Հայոց Դրամատիքական Ընկ. խորհուրդը՝ 20,000 ու., Ախալցխայից ստացուել է 15,000 ու.:

Հայ Դրամատիքական Խմբակ-ցութիւնը որոշել է տունել տ. Զաբէլի յօրեկանը առանձին ժողովրդական ծանր:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹ.

«Մշակի» № 2 Դպրոցական բաժնի վարիչ պ. Իս. Յարութիւնեանը պատասխանելով իմ «Դպրոցների ճգնաժամը» յօդուածին, թիւրիմացութիւն է համարում իմ գրած այն տողերը, թէ «ազգային խորհուրդը մինչև հիմա չէ տուել խոստացածի այն մասը, որ պիտի հասնէր. նա տուել է իր խոստացածի հազիւ մէկ տաս երորդական մասը», ապա յարակցում է, որ, —, ազգ. խորհուրդը իր խոստացածը լիովին կատարել է և խոստացածի մէկ երրորդ մասը (նոյն իսկ աւելին) տուել է: «Դրանից յետոյ հրաւիրում է ինձ հետաքրքրուել Թանգոյեան դպրոցի հաշիւներով, ուր ես տնտեսական խորհրդի անդամ եմ:

Դիտի տեսն պ. Իս. Յարութիւնեանին, նախ քան իմ յօդուածի տալն էլ հետաքրքրուել իմ Թանգոյեան դպրոցի ել ու մուտքի հաշիւով և տեսնել եմ, որ սոյն 1920—21 ուս. տարուայ համար խոստացած 400,000 ռուբլուց տուել են նրան միմիայն 45,000 ռ. որից, ինչպէս պաշտօնապէս յայտնում է դպրոցի տեսուչը, 19,500 ռ. էլ ետ են դրել պարենաւորման համար. իսկ զարկ միւս տուած գումարներին (ուսուցիչների պարենաւորման համար վրաց կառավարութեան), այդ գումարները Թանգոյեան դպրոցի գրքերում ոչ մուտք և ոչ ելք են գրուած, որովհետեւ ուսուցիչները (ինչպէս միւս դպրոցների ուսուցիչները) այդ գումարները չեն ընդունում ի հաշիւ իրանց ուժերի. նրանք ասում են՝ «ինչպէս միւս հիմնադրութիւններն ու հաստատութիւնները, այնպէս էլ Մ. Խորհուրդը այդ պարենաւորման համար տուած գումարները չը պիտի հաշուի այն գումարներին մէջ, որոնք նշանակուած են ուժերի համար:»

Վերջապէս իմ խօսքս էլի կրկնելու եմ, որ մեր դպրոցների ծախքերի մէկ չորրորդ կամ մէկ հինգերորդ մասը իր վրայ առնելով Մ. Խորհուրդը իրեն ձեռն առաւ դպրոցների բոլոր աւտոնոմ իրաւունքները, որոնց բացասա-

կան հետեանքները այսօր արդէն երևան են գալիս:

Յովհ. Մալխասեան

ԽՄԲԱԳՐՈՒԹ. ԲԱՐԱՅԻՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՐՆԵՐԻ ԶԱՅԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԻԿԱԿՈՒԹԻՒՆԸ (Դեկտեմբերի 20-ից 1920 թ.)

ԹԻՖԼԻՑԻ ՄԵԿՆՈՒՄ Է՝

Բաժում՝ № 3 գնացքը տո. 9 ժ. 3 ռ., հասնում է Բաժում գիշ. 11 ժ. 17 ռ.:

Փոթի՝ № 7 գնացքը գիշ. 10 ժ. 57 ռ., հասնում է Փոթի տո. 11 ժ. 42 ռ.:

Բորժում՝ № 19 գնացքը ցեր. 3 ժ. 29 ռ., հասնում է Բորժում երեկ. 9 ժ. 23 ռ.:

Բաժում՝ № 21 գնացքը երեկ. 8 ժ. 50 ռ., հասնում է Բաժում երեկ. 8 ժ. 37 ռ.:

Սալոյի՝ № 140 գնացքը տո. 10 ժ. 31 ռ., հասնում է Սալոյի ցեր. 3 ժ. Սանահին՝ № 413 գնացքը տո. 7 ժ. 45 ռ., հասնում է Սանահին ցեր. 4 ժ. 38 ռ.:

Կախէթ՝ № 4 գնացքը տո. 9 ժ. 30 ռ.:

ԹԻՖԼԻՑ Է ՀԱՍՆՈՒՄ՝

Բաժումից՝ № 22 գնացքը գիշ. 3 ժ. 46 ռ.:

» № 4 գնացքը երեկ. 9 ժ. 39 ռ.:

Փոթից՝ № 7 գնացքը տո. 9 ժ. 47 ռ.:

Բորժումից՝ № 20 գնացքը տո. 32 ռ.:

Սալոյից՝ № 141 գնացքը երեկ. 5 ժ. 44 ռ.:

Սանահինից՝ № 419 գնացքը ցեր. 4 ժ. 46 ռ.:

Կախէթից՝ № 3 գնացքը երեկ. 5 ժ. 20 ռ.:

Յայտարարութիւններ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԻՅԿ. Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ Հիմնուած 1880 թ.

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ Բ. Ս. Ե)

Ամեն օր, բացի կիրակի օրերից. «606» եւ «914»-ի

ճեղքուելու առ. 11—12 ժ.

Բ. Ս. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութիւն, վերականգն (սիֆիլիս) հիւանդութիւններ:

Գ. Մ. ԱՆԱԶԵՐԳԵԱՆ—10—11 ժ. Ղալաի հիւանդ.:

Բ. Գ. ԱՆԱՍԱՐԴԵԱՆ—10—12 ժ. ներքին Ղալաի հիւանդ., երեխայից հիւանդ. և ծագ հիւանդ.:

Մ. Գ. ԱՆԻՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու վերաբուժութիւն և վերականգն (սիֆիլիս) և Բ. Ս. ԲՈՐԺԵԿՈՎՍԿԻԱՆ—12—1 ժ. երեխաներ, շաքար, կանաչ հիւ. և մանկաբուժ.:

Ս. Ս. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայից հիւանդ.:

Վ. Ֆ. ԿՐԻԳԵՐ—5—7 ժ. մաքրու, սիֆիլիս, վերականգն և միջանոսական հիւանդ.:

Չքաւորներին բժշկական խորհուրդը տուած է ձերբազար:

Հիւանդանոցի վերաբաւումը՝ Բժշկ. Բ. Յաւասարդի 8.